Դասընթացի անվանումը (կրթամոդուլի դասիչը)	**ՊՐԱԿՏԻԿԱ** **/արվեստանոցային ժամ/** **(7.20ՃՏՊ011)**
ECTS կրեդիտ	8 կրեդիտ
Ուսումնառության վերջնարդյունքներ	Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի. *(գիտելիք և իմացություն)* • հիմնավորել մագիստրոսական թեզի թեմայի նորույթը, արդիականությունը, նպատակը և խնդիրները, • ուրվագծել մագիստրոսական ընտրված թեզի հիմնա–կան հայեցակարգը, մեկնաբանել դրա հիմնական դրույթները, • ձևակերպել օգտագործված ելակետային՝ մատենագի–տական, գրաֆիկական, արխիվային նյութերից բխող հիմնադրույթները, • ներկայացնել պրակտիկայի ընթացքում կատարված աշխատանքը, պաշտպանել ձևավորված հայեցակարգը, *(կարողություններ)* • համադրել տարբեր ելակետային աղբյուրներից ձեռք բերված նյութերը, • առաջարկել նոր հայեցակարգեր՝ հիմնվելով կատար–ված վերլուծության արդյունքների վրա, • լուսաբանել ուսումնասիրված մատենագիտությունը հետազոտական մասում, • ձևակերպել թեզի հետազոտական մասը՝ հետևելով մա-գիստրոսական թեզին առաջադրվող պահանջներին:
Պրակտիկայի նկարագրություն	Պրակտիկան նախատեսված է ՃՇՀԱՀ-ի «Ճարտարապետու-թյուն» մասնագիտության կրթության մագիստրատուրայի 2-րդ կուրսի 1-ին կիսամյակում: Այն կարևոր փուլ է ճարտարա-պետական մագիստրոսական կրթական համակարգում: Պրակտիկայի նպատակն է ամփոփել նախորդ տարում մագիստրոսական թեզին առնչվող ելակետային նյութերի, մատենագիտական, գրաֆիկական նյութերի վերլուծությու-նը, խնդիրների և հնարավորությունների վեր հանումը: Պրակտիկայի ընթացքում ձևակերպվում է հետազոտական

	մասի գրաֆիկական վերլուծությունների հիմնական հատ-վածը, որը տեղ է գտնում մագիստրոսական թեզի հետազոտական մասի մեջ։ Պրակտիկայի ավարտին մագիստրոսը ներկայացնում է հաշվետվություն՝ 25 էջի սահմաններում՝ ներառյալ գրաֆիկական, լուսանկարչական նյութերը։